



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան

05.05.2018թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի թիվ ՍՑ-ԷՍ-2017/54

Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհրուրդը (այսուհետ՝ նաև խորհուրդ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 04.10.2017թ. թիվ 04/26-3/17981-17 գրությամբ Արթուր Օհանյան Ա/Ձ-ին (ՀՎՀՀ 27928323) (այսուհետ՝ նաև Ա/Ձ) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ ոստիկանության (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 26.09.2017թ. թիվ 4/1166 և գրության հիման վրա, 04.10.2017թ. ՀՀ գնումների բողոքարկման խորհրդում նախաձեռնել է Արթուր Օհանյան Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ նաև Ցուցակ) ներառելու պաշտոնական ընթացակարգ:

ՀՀ ֆինանսների նախարարությունը պատշաճ ծանուցվել է խորհրդում անցկացվող նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն նախարարության կողմից լիազորված որևէ ներկայագուգիչ չի ներկայագել:

2. ՀՀ ոստիկանության ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

ՀՀ ոստիկանությունը 26.09.2017թ. թիվ 4/1166 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«ՀՀ ոստիկանության կողմից 11.09.2017թ. «ՀՀ ԿԱ ՈՉ ԳՀԱՊՁԲ-17/12/ԱԲ/3/ՊԾ» ծածկագրով հայտարարված մրցույթում 1-ին տեղը զբաղեցրած մասնակցի ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման կարգի 43-րդ կետի 3-րդ մասի համաձայն, հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության մասին 20.09.2017թ. ՀՀ կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտե կատարվել է հարցում: Նույն որոշման 48-րդ կետի համաձայն ՀՀ կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեից 25.09.2017թ. ստացված եզրակացության արդյունքում պարզվել է, որ Արթուր Օհանյան Ա/Ձ-ն, հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունեցել է 38.720 ՀՀ դրամ ժամկետանց հարկային պարտավորություններ:»:

ՀՀ ոստիկանությունը պատշաճ ծանուցվել է Խորհրդում անցկացվող նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն նախարարության կողմից լիազորված որևէ ներկայացուցիչ չի ներկայացել:

3. Արթուր Օհանյան Ա/Ձ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

Արթուր Օհանյան Ա/Ձ-ն 13.11.2017թ. գրությամբ Խորհրդին ներկայացրել է գրավոր դիրքորոշում, որով հայտնել է հետևյալը.

«Արթուր Օհանյան Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ՀՀ գնումների բողոքարկման Խորհրդում նախաձեռնված ՍՅ-ԷՍ-2017/54 պաշտոնական ընթացակարգի վերաբերյալ ներկայացվում են հետևյալ նկատառումները.

Արթուր Օհանյան Ա/Ձ-ն (ՀՎՀՀ 27928323) 19.09.2017թ. մասնակցության հայտ է ներկայացրել ՀՀ ոստիկանության գորքերի կողմից հայտարարված «ՀՀ ԿԱ ՈՋ ԳՀԱՊՁԲ-17/12/ԱԲ/3/ՊԾ» ծածկագրով գնման ընթացակարգին (այսուհետ նաև՝ Ընթացակարգ) և զբաղեցրել 1-ին տեղ:

Հայտի հավելված 2-ով՝ մասնակցության իրավունքի պահանջներին համապատասխանելու մասին հայտարարությամբ, Արթուր Օհանյան Ա/Ձ-ն հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՀ ԿԱ ՈՋ ԳՀԱՊՁԲ-17/12/ԱԲ/3/ՊԾ» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

«ՀՀ ԿԱ ՈՋ ԳՀԱՊՁԲ-17/12/ԱԲ/3/ՊԾ» ծածկագրով մրցույթի գնահատող հանձնաժողովը (այսուհետ նաև՝ գնահատող հանձնաժողով) 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի վերաբերյալ 20.09.2017թ. հարցում է կատարել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության մասին:

Ի պատասխան վերոնշյալ հարցմանը՝ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 25.09.2017թ. տրամադրված եզրակացության արդյունքում պարզվել է, որ Արթուր Օհանյան Ա/Ձ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունեցել է 38.720 ՀՀ դրամ ժամկետանց հարկային պարտավորություն:

Գնահատող հանձնաժողովի 25.09.2017թ. ժամը 12:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրության 1.6.1 կետի համաձայն՝ Արթուր Օհանյան Ա/Ձ-ի կողմից ներկայացրած հայտը գնահատվել է անբավարար և մերժվել է՝ համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 2-րդ կետի, քանզի Արթուր Օհանյան Ա/Ձ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը

ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 25.09.2017թ. տրամադրված եզրակացության վերաբերյալ ամբողջական տեղեկատվություն ստանալու նպատակով Արթուր Օհանյան Ա/Ձ-ի կողմից լիազորված փաստաբանը 16.10.2017թ. համապատասխան հարցում է կատարել ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե: Վերոհիշյալ հարցմամբ փաստաբան Ա. Ենգոյանը, ղեկավարվելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջներով, խնդրել է տրամադրել տեղակատվություն Արթուր Օհանյան Ա/Ձ-ի (ՀՎՀՀ 27928323) մոտ 19.09.2017թ. դրությամբ եկամտային հարկի գծով առկա 38.720 ՀՀ դրամի (32.000 ՀՀ դրամ՝ ապառք, 6720 ՀՀ դրամ՝ տույժ) հարկային պարտավորության ծագման հիմքերի (այդ թվում նաև ծագման ժամկետի) վերաբերյալ՝ կից ներկայացնելով ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկ վճարողների վարչության թիվ 4 բաժնի կողմից 17.10.2017թ. տրված թիվ 697 տեղեկանքը:

Ի պատասխան վերոնշյալ հարցմանը՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից 04.11.2017թ. թիվ 70-4/45464-17 գրությամբ հայտնվել է հետևյալը. Արթուր Օհանյան Ա/Ձ-ի կողմից 2015թ. տարեկան եկամուտների մասին պարզեցված հաշվարկը ներկայացվել է 09.03.2017թ.-ին: «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի համաձայն հարկ վճարողների կողմից հարկային մարմին ներկայացվող հաշվարկը հարկային օրենսդրությամբ սահմանված ժամկետից ուշ ներկայացվելու կամ չներկայացնելու դեպքում այդ ժամկետին հաջորդող յուրաքանչյուր 15 լրացած օրվա համար հարկ վճարողից գանձվում է տուգանք՝ հաշվարկված հարկի ընդհանուր գումարի 5 տոկոսի չափով: Նշված տուգանքների հանրագումարը չպետք է գերազանցի այդ հարկի հաշվարկված ընդհանուր գումարը: Ուստի հաշվարկը ուշ ներկայացնելու համար հաշվարկվել է տուգանք 32.000 ՀՀ դրամ գումարի չափով: Վերոգրյալից ելնելով՝ 01.12.2016թ. կատարված 48.000 ՀՀ դրամ եկամտային հարկի վճարումից 32.000 ՀՀ դրամը ուղղվել է հաշվարկված տուգանքին: Հետևաբար, տեղեկանքում նշված պարտավորությունները առաջացել են 2016թ. տարեկան եկամուտների պարզեցված հաշվարկով հայտարարագրված հարկի չվճարված

մասի և «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածով հաշվարկված տույժի արդյունքում»:

Այսպիսով, ըստ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 04.11.2017թ. թիվ 70-4/45464-17 գրության՝ տեղեկանքում նշված 38.720 ՀՀ դրամ հարկային պարտավորությունը առաջացել է 2016թ.՝ 2015թ. տարեկան եկամուտների մասին պարզեցված հաշվարկով հայտարարագրված հարկի չվճարված մասի և «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածով հաշվարկված տույժի արդյունքում:

Մինչդեռ, անհրաժեշտ է նշել, Արթուր Օհանյան Ա/Ձ-ն ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրում հաշվառվել է միայն 02.03.2017թ., իսկ ըստ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 04.11.2017թ.-ին թիվ 70-4/45464-17 գրության՝ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 25.09.2017թ.-ին տրամադրված եզրակացությունում նշված Արթուր Օհանյան Ա/Ձ-ի մոտ առկա 38.720 դրամ ժամկետանց հարկային պարտավորությունը առաջացել է 2016թ.՝ 2015թ. տարեկան եկամուտների մասին պարզեցված հաշվարկով հայտարարագրված հարկի չվճարված մասի և «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածով հաշվարկված տույժի արդյունքում:

Վերոհիշյալից ուղղակիորեն բխում է, որ 38.720 ՀՀ դրամ ժամկետանց հարկային պարտավորությունը առաջացել է ոչ թե Արթուր Օհանյան Ա/Ձ-ի մոտ, որը ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրում հաշվառվել է միայն 02.03.2017թ, այլ քաղաքացի Արթուր Օհանյանի մոտ, քանզի նշված 38.720 ՀՀ դրամ հարկային պարտավորությունը առաջացել է 2016թ.՝ 2015թ. տարեկան եկամուտների մասին պարզեցված հաշվարկով հայտարարագրված հարկի չվճարված մասի և «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածով հաշվարկված տույժի արդյունքում, իսկ ոչ 2015թ., ոչ էլ 2016թ. Արթուր Օհանյան Ա/Ձ-ն դեռևս գոյություն չի ունեցել և պետական ռեգիստրում հաշվառված չի եղել:

Ելնելով վերոգրյալից՝ գտնում ենք, որ հայտի Հավելված 2-ով՝ մասնակցության իրավունքի պահանջներին համապատասխանելու մասին հայտարարությամբ, Արթուր Օհանյան Ա/Ձ-ն հավաստելով, որ բավարարում է «ՀՀ ԿԱ ՈՁ ԳՀԱՊՁԲ-17/12/ԱԲ/3/ՊԾ» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին, չի խախտել գնման գործընթացի շրջանակում ստանձնած որևէ

պարտավորություն, քանզի Արթուր Օհանյան Ա/Ձ-ն չի ունեցել ժամկետանց հարկային պարտավորություն:

Ի լրումն 13.11.2017թ. գրությամբ ներկայացված դիրքորոշման՝ Արթուր Օհանյան Ա/Ձ-ն 07.02.2017թ. գրությամբ Խորհրդին է ներկայացրել գրավոր դիրքորոշում, որով հայտնել է հետևյալը.

«Արթուր Օհանյան Ա/Ձ-ի կողմից ՀՀ գնումների բողոքարկման Խորհրդին ներկայացրած նախորդ դիրքորոշմամբ հայտնվել է, որ 27.11.2017թ. կատարվել է փաստաբանական հարցում՝ ուղղված ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե: ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 04.11.2017թ. թիվ 70-4/45464-17 գրությամբ հայտնվել է հետևյալը. «Արթուր Օհանյան Ա/Ձ-ի կողմից 2015թ. տարեկան եկամուտների մասին պարզեցված հաշվարկը ներկայացվել է 09.03.2017թ.: «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի համաձայն հարկ վճարողների կողմից հարկային մարմին ներկայացվող հաշվարկը հարկային օրենսդրությամբ սահմանված ժամկետից ուշ ներկայացվելու կամ չներկայացնելու դեպքում այդ ժամկետին հաջորդող յուրաքանչյուր 15 լրացած օրվա համար հարկ վճարողից գանձվում է տուգանք՝ հաշվարկված հարկի ընդհանուր գումարի 5 տոկոսի չափով: Նշված տուգանքների հանրագումարը չպետք է գերազանցի այդ հարկի հաշվարկված ընդհանուր գումարը: Ուստի հաշվարկը ուշ ներկայացնելու համար հաշվարկվել է տուգանք 32.000 ՀՀ դրամ գումարի չափով: Վերոգրյալից ելնելով՝ 01.12.2016թ. կատարված 48.000 ՀՀ դրամ եկամտային հարկի վճարումից 32.000 ՀՀ դրամը ուղղվել է հաշվարկված տուգանքին: Հետևաբար, տեղեկանքում նշված պարտավորությունները առաջացել են 2016թ. տարեկան եկամուտների պարզեցված հաշվարկով հայտարարագրված հարկի չվճարված մասի և «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածով հաշվարկված տույժի արդյունքում:»:

Այսպիսով, ըստ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից 04.11.2017թ. թիվ 70-4/45464-17 գրության՝ տեղականքում նշված 38.720 ՀՀ դրամ հարկային պարտավորությունը առաջացել է 2016թ.՝ 2015թ. տարեկան եկամուտների մասին պարզեցված հաշվարկով հայտարարագրված հարկի չվճարված մասի և «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածով հաշվարկված տույժի արդյունքում: Մինչդեռ, անհրաժեշտ է նշել, Արթուր Օհանյան Ա/Ձ-ն ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական

ռեգիստրում հաշվառվել է միայն 02.03.2017թ., իսկ ըստ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 04.11.2017թ. թիվ 70-4/45464-17 գրության՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից 25.09.2017թ.-ին տրամադրված եզրակացությունում նշված Արթուր Օհանյան Ա/Ձ-ի մոտ առկա 38.720 ՀՀ դրամ ժամկետանց հարկային պարտավորությունը առաջացել է 2016թ.՝ 2015թ. տարեկան եկամուտների մասին պարզեցված հաշվարկով հայտարարագրված հարկի չվճարված մասի և «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածով հաշվարկված տույժի արդյունքում: Վերոհիշյալից ստացվում է, որ 38.720 ՀՀ դրամ ժամկետանց հարկային պարտավորությունը առաջացել է ոչ թե Արթուր Օհանյան Ա/Ձ-ի մոտ, որը ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրում հաշվառվել է միայն 02.03.2017թ., այլ քաղաքացի Արթուր Օհանյանի մոտ, քանզի նշված 38.720 ՀՀ դրամ հարկային պարտավորությունը առաջացել է 2016թ.՝ 2015թ. տարեկան եկամուտների մասին պարզեցված հաշվարկով հայտարարագրված հարկի չվճարված մասի և «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածով հաշվարկված տույժի արդյունքում, իսկ ոչ 2015թ., ոչ էլ 2016թ. Արթուր Օհանյան Ա/Ձ-ն դեռևս գոյություն չի ունեցել և պետական ռեգիստրում հաշվառված չի եղել: Սակայն 38.720 ՀՀ դրամ ժամկետանց հարկային պարտավորություն ունենալու հիմքով Արթուր Օհանյան Ա/Ձ-ի նկատմամբ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդում նախաձեռնվել է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգ:

Ղեկավարվելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջներով՝ խնդրում եմ հայտնել՝ արդյոք քաղաքացի Արթուր Օհանյանի մոտ 2016թ. առաջացած հարկային պարտավորությունը վերաբերում է նաև 2017թ. ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրում հաշվառված Արթուր Օհանյան ԱՁ-ի (ՀՎՀՀ 27928323) և ԱՁ Արթուր Օհանյանը նման փաստական հանգամանքներում 19.09.2017թ. ունեցել է արդյոք 38.720 ՀՀ դրամ ժամկետանց հարկային պարտավորություն:

Ի պատասխան վերոնշյալ հարցմանը, ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն 08.01.2018թ. թիվ 70-4/292-18 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի՝

1. 26-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ քաղաքացին, որպես անհատ ձեռնարկատեր հաշվառելու պահից, իրավունք ունի, առանց իրավաբանական անձ կազմավորելու, զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ:

2. 27-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքացին իր պարտավորությունների համար պատասխանատու է իրեն պատկանող ամբողջ գույքով, բացառությամբ այն գույքի, որի վրա, օրենքին համապատասխան, բռնագանձում չի տարածվում:

«Անհատ ձեռնարկատիրոջ մասին» ՀՀ օրենքի՝

1. 1-ին հոդվածի համաձայն՝ անհատ ձեռնարկատիրական այն ֆիզիկական անձն է, որն իրավունք ունի, առանց իրավաբանական անձ կազմավորելու, ինքնուրույն, իր անունից և իր ռիսկով իրականացնել գործունեություն, որի հիմնական նպատակը գույք օգտագործելուց, ապրանքներ վաճառելուց, աշխատանքներ կատարելուց կամ ծառայություններ մատուցելուց շահույթ (եկամուտ) ստանալն է:

2. 9-րդ հոդվածի համաձայն՝ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձը կրում է պատասխանատվություն իր՝ որպես անհատ ձեռնարկատեր ստանձնած պարտավորությունների կատարման համար:

«Կազմակերպություններին և ֆիզիկական անձանց հարկային հաշվառման վերցնելու և հարկային հաշվառումից հանելու մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ ֆիզիկական անձին տրամադրվող հարկ վճարողի հաշվառման համարը մնում է անփոփոխ վերջինիս տարբեր կարգավիճակներում, և որպես անհատ ձեռնարկատեր հանդիսացող, և որպես անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձ համարվելու ժամանակ:

«Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտներ են համարվում ՀՀ պետական և համայնքների բյուջեներ վճարվող հարկերի, տուրքերի և օրենքով սահմանված կարգով հաշվարկվող տույժերի և տուգանքների ամբողջությունը, որոնց հաշվառումը, հաշվառման և (կամ) վճարման նկատմամբ հսկողությունը, մուտքերի ապահովման վերահսկողությունն օրենսդրությամբ վերապահված է հարկային մարմնին:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. 526-Ն որոշման թիվ 1 Հավելվածով հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 44-րդ կետի համաձայն՝ գնահատող

հանձնաժողովի էլեկտրոնային հարցումն ստանալու օրվանից 3 աշխատանքային օրվա ընթացքում ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրում է տեղեկատվություն գնման գործընթացում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ:

Հաշվի առնելով վերը նշված իրավական կարգավորումները, հայտնում ենք, որ անհատ ձեռնարկատերն, ըստ էության, նույն ֆիզիկական անձն է, որը պետական հաշվառման պահից ձեռք է բերում ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու իրավունք: Հետևաբար, անհատ ձեռնարկատիրոջ պարտավորությունների մեջ ներառվում է նաև ֆիզիկական անձի տարեկան եկամուտների մասին պարզեցված հաշվարկով ներկայացված պարտավորությունը:

Միաժամանակ, հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ վերը նշված կարգով գնման գործընթացին կարող են մասնակցել ինչպես անհատ ձեռնարկատերերը, այնպես էլ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձինք, ապա տվյալ դեպքում, հաշվի է առնվում անհատ փեռնարկատեր հանդիսացող ֆիզիկական անձի՝ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցած ժամկետանց պարտավորությունների (այդ թվում՝ անհատ ձեռնարկատեր չհանդիսանալու ժամանակահատվածում առաջացած) ընդհանուր գումարը:

Գտնում ենք, որ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի 08.01.2018թ. թիվ 70-4/292-18 գրությամբ ներկայացված դիրքորոշումը հիմնավոր չէ, այն կատարվել է օրենքի սխալ մեկնաբանման հիման վրա և Արթուր Օհանյան Ա/Ձ-ին չի կարող վերագրվել ֆիզիկական անձ Արթուր Օհանյանի ժամկետանց հարկային պարտավորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Անհատ ձեռնարկատիրոջ մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ ֆիզիկական անձի, որպես անհատ ձեռնարկատիրոջ, իրավունակությունն ու գործունակությունը ծագում են նրա պետական հաշվառման պահից և դադարում են այդ ֆիզիկական անձի իրավունակության կամ գործունակության դադարման, ինչպես նաև օրենքով նախատեսված դեպքերում պետական հաշվառումն ուժը կորցրած կամ անվավեր ճանաչվելու պահից:

Նույն օրենքի 7-րդ հոդվածի համաձայն՝ անհատ ձեռնարկատիրոջ գործունեության ֆինանսական ցուցանիշը նրա ստացած եկամուտն է: Անհատ ձեռնարկատերն օրենքով սահմանված կարգով վճարում է համապատասխան հարկեր, տուրքեր և պարտադիր այլ վճարներ:

Նույն օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձը կրում է պատասխանատվություն իր՝ որպես անհատ ձեռնարկատեր ստանձնած պարտավորությունների կատարման համար:

Այսպիսով, ինչպես հետևում է վերոհիշյալ իրավական նորմերից՝ Արթուր Օհանյան Ա/Ձ-ի իրավունակությունն ու գործունակությունը առաջացել է միայն ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրում հաշվառվելուց հետո, այն է՝ 02.03.2017թ., մինչդեռ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 25.09.2017թ. տրամադրված եզրակացությունում նշված Արթուր Օհանյան Ա/Ձ-ի մոտ առկա 38.720 ՀՀ դրամ ժամկետանց հարկային պարտավորությունը առաջացել է ֆիզիկական անձ Արթուր Օհանյանի մոտ 2016թ.՝ 2015թ. տարեկան եկամուտների մասին պարզեցված հաշվարկով հայտարարագրված հարկի չվճարված մասի և «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածով հաշվարկված տույժի արդյունքում:

Ինչպես հայտնի է, անձի գործունակությունը իր գործողություններով իրավաբանական սուբյեկտի ունակությունն է ունենալ իրավաբանական իրավունքներ և կրել իրավաբանական պարտականություններ:

Այսպիսով, Արթուր Օհանյան Ա/Ձ-ի մոտ գործունակությունը՝ իրավաբանական պարտականություններ կրելու մասով առաջացել է միայն ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրում հաշվառվելուց հետո, այն է՝ 02.03.2017թ., իսկ «Անհատ ձեռնարկատիրոջ մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի համաձայն՝ անհատ ձեռնարկատիրոջ գործունեության ֆինանսական ցուցանիշը նրա ստացած եկամուտն է և անհատ ձեռնարկատերն օրենքով սահմանված կարգով վճարում է համապատասխան հարկեր, տուրքեր և պարտադիր այլ վճարներ:

Այլ կերպ ասած, Արթուր Օհանյան Ա/Ձ-ի մոտ հարկային պարտավորություն կարող է առաջանալ միայն վերջինիս ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրում հաշվառվելուց հետո:

Մինչդեռ, ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 25.09.2017թ. տրամադրված եզրակացությամբ Արթուր Օհանյան Ա/Ձ-ին վերագրվել է այնպիսի ժամկետանց հարկային պարտավորություն, որը առաջացել է ֆիզիկական անձ Արթուր Օհանյանի մոտ դեռևս 2016թ.:

Որպես եզրակացությամբ տրամադրված տեղեկատվության հիմնավորում՝ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն 08.01.2018թ. թիվ 70-4/292-18 գրությամբ վկայակոչել է «Անհատ ձեռնարկատիրոջ մասին» ՀՀ 9-րդ հոդվածը, որի համաձայն անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձը կրում է պատասխանատվություն իր՝ որպես անհատ ձեռնարկատեր ստանձնած պարտավորությունների կատարման համար: Մինչդեռ նշված հոդվածից ընդամենը բխում է, որ ֆիզիկական անձը կրում է պատասխանատվություն իր՝ որպես անհատ ձեռնարկատեր ստանձնած պարտավորությունների կատարման համար, սակայն ոչ հակառակը: Իսկ «Անհատ ձեռնարկատիրոջ մասին» ՀՀ օրենքը չի պարունակում որևէ դրույթ, որը թույլ կտա անհատ ձեռնարկատերի ստանձնած պարտավորությունների մեջ ներառել նաև ֆիզիկական անձի պարտավորությունները:

Ավելին, նման պայմաններում ավելի, քան անտրամաբանական է, երբ Արթուր Օհանյան Ա/Ձ-ի 02.03.2017թ. ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրում հաշվառվելու պայմաններում Ա/Ձ-ին վերագրել նաև ֆիզիկական անձ Արթուր Օհանյանի մոտ 2016թ. առաջացած ժամկետանց հարկային պարտավորություն:

«Գնումների մասին» 2016թ. ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-րդ մասի 6-րդ կետի «ա» պարբերության համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Գտնում ենք, որ «ՀՀ ԿԱ ՈՁ ԳՀԱՊՁԲ-17/12/ԱԲ/3/ՊԾ» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում հայտի Հավելված 2-ով՝ մասնակցության իրավունքի պահանջներին համապատասխանելու մասին հայտարարությամբ, Արթուր Օհանյան Ա/Ձ-ն հավաստելով, որ բավարարում է «ՀՀ ԿԱ ՈՁ ԳՀԱՊՁԲ-17/12/ԱԲ/3/ՊԾ»

ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված մասնա-կցության իրավունքի պահանջներին, չի խախտել «Գնումների մասին» 2016թ. ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» պարբերության պահանջները, քանզի 02.03.2017թ. ՀՀ ԱՆ հրավաքանական անձանց պետական ռեգիստրում հաշվառված Արթուր Օհանյան Ա/Ձ-ն չի ունեցել ժամկետանց հարկային պարտավորություն:»:

Ի լրումն 16.04.2018թ գրությամբ Արթուր Օհանյան Ա/Ձ-ն խորհրդին է ներկայացրել գրավոր դիրքորոշում, որով հայտնել է հետևյալը.

«Ի պատասխան ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի 29.03.2018թ. թիվ ԳԲԽ-ԷՍ/1/5770-18 գրության՝ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն հայտնել է հետևյալը. «Հիմք ընդունելով ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկ վճարողների սպասարկման վարչության 03.04.2018թ. գրությամբ տրամադրած տեղեկատվությունը՝ հայտնում եմ, որ Արթուր Օհանյան ԱՁ-ի (ՀՎՀՀ 27928323) ժամկետանց հարկային պարտավորությունը 19.09.2017թ. դրությամբ կազմում է 38.720 ՀՀ դրամ, որն առաջացել է 2016թ. տարեկան եկամուտների մասին պարզեցված հաշվարկով հայտարարագրված, որպես ֆիզիկական անձ, վարձակալական վճարներից ստացված եկամտից: Արթուր Օհանյանը որպես անհատ ձեռնարկատեր ՀՀ ԱՆ պետական ռեգիստրում հաշվառվել է 02.03.2017թ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ անհատ ձեռնարկատերն, ըստ էության, նույն ֆիզիկական անձն է, որը պետական հաշվառման պահից ձեռք է բերում ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու իրավունք, հետևաբար անհատ ձեռնարկատիրոջ պարտավորությունների մեջ ներառվում է նաև ֆիզիկական անձի տարեկան եկամուտների մասին պարզեցված հաշվարկով ներկայացված պարտավորությունը:»:

Գտնում ենք, որ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված վերոնշյալ դիրքորոշումը հիմնավոր չէ, քանի որ այն կատարվել է օրենքի սխալ մեկնաբանման հիման վրա և Արթուր Օհանյան Ա/Ձ-ին չի կարող վերագրվել ֆիզիկական անձ Արթուր Օհանյանի ժամկետանց հարկային պարտավորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Անհատ ձեռնարկատիրոջ մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ ֆիզիկական անձի, որպես անհատ ձեռնարկատիրոջ, իրավունակությունն ու գործունակությունը ծագում են նրա պետական հաշվառման պահից և դադարում են այդ

Ֆիզիկական անձի իրավունակության կամ գործունակության դադարման, ինչպես նաև օրենքով նախատեսված դեպքերում պետական հաշվառումն ուժը կորցրած կամ անվավեր ճանաչվելու պահից:

Նույն օրենքի 7-րդ հոդվածի համաձայն՝ անհատ ձեռնարկատիրոջ գործունեության ֆինանսական ցուցանիշը նրա ստացած եկամուտն է: Անհատ ձեռնարկատերն օրենքով սահմանված կարգով վճարում է համապատասխան հարկեր, տուրքեր և պարտադիր այլ վճարներ:

Նույն օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձը կրում է պատասխանատվություն իր՝ որպես անհատ ձեռնարկատեր ստանձնած պարտավորությունների կատարման համար:

Այսինքն՝ Արթուր Օհանյան Ա/Ձ-ի իրավունակությունն ու գործունակությունը առաջացել է միայն ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրում հաշվառվելուց հետո, այն է՝ 02.03.2017թ., մինչդեռ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 25.09.2017թ. տրամադրված եզրակացությունում նշված Արթուր Օհանյան Ա/Ձ-ի մոտ առկա 38.720 ՀՀ դրամ ժամկետնց հարկային պարտավորությունը առաջացել է ֆիզիկական անձ Արթուր Օհանյանի մոտ 2016թ.՝ 2015թ. տարեկան եկամուտների մասին պարզեցված հաշվարկով հայտարարագրված հարկի չվճարված մասի և «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածով հաշվարկված տույժի արդյունքում:

Արթուր Օհանյան Ա/Ձ-ի մոտ գործունակությունը՝ իրավաբանական պարտականություններ կրելու մասով առաջացել է միայն ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրում հաշվառվելուց հետո, այն է՝ 02.03.2017թ., իսկ «Անհատ ձեռնարկատիրոջ մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի համաձայն՝ անհատ ձեռնարկատիրոջ գործունեության ֆինանսական ցուցանիշը նրա ստացած եկամուտն է և անհատ ձեռնարկատերն օրենքով սահմանված կարգով վճարում է համապատասխան հարկեր, տուրքեր և պարտադիր այլ վճարներ:

Այլ կերպ ասած, Արթուր Օհանյան Ա/Ձ-ի մոտ հարկային պարտավորություն կարող է առաջանալ միայն վերջինիս ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրում հաշվառվելուց հետո:

Մինչդեռ, ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 25.09.2017թ. տրամադրված եզրակացությամբ Արթուր Օհանյան Ա/Ձ-ին վերագրվել է այնպիսի ժամկետանց հարկային պարտավորություն, որը առաջացել է ֆիզիկական անձ Արթուր Օհանյանի մոտ դեռևս 2016թ.:

Այս դեպքում անտրամաբանական է, երբ Արթուր Օհանյան Ա/Ձ-ի 02.03.2017թ. ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրում հաշվառվելու պայմաններում Ա/Ձ-ին վերագրել նաև ֆիզիկական անձ Արթուր Օհանյանի մոտ 2016թ. առաջացած ժամկետանց հարկային պարտավորություն:

«Գնումների մասին» 2016թ. ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-րդ մասի 6-րդ կետի «ա» պարբերության համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Նման փաստական հանգամանքներում ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին խնդրում ենք Արթուր Օհանյան Ա/Ձ-ին օրենսդրության սխալ մեկնաբանման արդյունքում վերջինիս վերագրած ժամկետանց հարկային պարտավորություն ունենալու հիմքով չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:»:

Խորհրդում տեղի ունեցած նիստերին մասնակցում էին Արթուր Օհանյան Ա/Ձ-ի կողմից լիազորված ներկայացուցիչներ Հասմիկ Ենգոյանը և Արթուր Պարանյանը:

4. ՍՑ-ԷՍ-2017/54 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը.

Խորհուրդն ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության 04.10.2017թ. թիվ 04/26-3/17981-17 գրությունը, ՀՀ ոստիկանությանը (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 26.09.2017թ. թիվ 4/1166 գրությունը և կից ներկայացված փաստաթղթերը, «ՀՀ ԿԱ ՈՁ ԳՀԱՊՁԲ-17/12/ԱԲ/3/ՊԾ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերը

(այսուհետ՝ նաև Հրավեր), «ՀՀ ԿԱ ՈՋ ԳՀԱՊՁԲ-17/12/ԱԲ/3/ՊԾ» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 19.09.2017թ. ժամը 16:00-ին կայացած նիստի թիվ 3 և 25.09.2017թ. ժամը 12:00-ին նիստի թիվ 4 արձանագրությունները, Արթուր Օհանյան Ա/Ձ-ի կողմից 13.11.2017թ., 07.02.2017թ. և 16.04.2018թ. ներկայացված գրավոր դիրքորոշումները, Արթուր Օհանյան Ա/Ձ-ի կողմից Ընթացակարգին ներկայացված մասնակցության հայտի պատճենը, ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 04.11.2017թ. թիվ 70-4/45464-17 և 08.01.2018թ. թիվ 70-4/292-18 Արթուր Օհանյան Ա/Ձ-ի փաստաբանին ներկայացված գրությունները, ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմի հարկ վճարողների սպասարկման վարչության թիվ 4 բաժնի կողմից 17.10.2017թ. Արթուր Օհանյան Ա/Ձ-ին տրված տեղեկանքը, ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի 29.03.2018թ. հարցմանն ի պատասխան ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 04.04.2018թ. ներկայացված գրությունը. ՀՀ ԿԱ պետական եկամուտների կողմից 25.09.2017թ. տրված եզրակացությունը.

ՀՀ ոստիկանության զորքերի կարիքների համար՝ սառնարանային խցիկների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀ ԿԱ ՈՋ ԳՀԱՊՁԲ-17/12/ԱԲ/3/ՊԾ» ծածկագրով գնանշման հարցում (այսուհետ՝ Ընթացակարգ), որին մասնակցության հայտ է ներկայացրել Արթուր Օհանյան Ա/Ձ-ն:

Ընկերությունը Ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացված հայտի N2 հավելվածով՝ ընթացակարգին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին համապատասխանելու մասին հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՀ ԿԱ ՈՋ ԳՀԱՊՁԲ-17/12/ԱԲ/3/ՊԾ» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

Հանձնաժողովը 19.09.2017թ. նիստի թիվ 3 արձանագրության 1.8.1 կետով որոշել է «ՀՀ ԿԱ ՈՋ ԳՀԱՊՁԲ-17/12/ԱԲ/3/ՊԾ» ծածկագրով ընթացակարգին՝ Արթուր Օհանյան Ա/Ձ-ի կողմից ներկայացված հայտը գնահատել բավարար և ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հյաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն ՀՀ ԿԱ պետական

եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ:

Հանձնաժողովը 25.09.2017թ. ժամը 12:00-ին կայացած նիստի թիվ 4 արձանագրությամբ որոշել է Արթուր Օհանյան Ա/Ձ-ի հայտը մերժել՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով՝ օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց հարկային պարտավորությունների առկայության հիմնավորմամբ:

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կողմից 25.09.2017թ. տրամադրած եզրակացության համաձայն՝ Արթուր Օհանյան Ա/Ձ-ի ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների գումարը կազմել է 38.720 ՀՀ դրամ:

Պաշտոնական ընթացակարգի քննության նպատակով կայացած նիստի ժամանակ Ա/Ձ-ի ներկայացուցիչը հայտնեց, որ Արթուր Օհանյան Ա/Ձ-ի մոտ 19.09.2017թ. առկա 38.720 ՀՀ դրամի ժամկետանց հարկային պարտավորությունը առաջացել է մինչև Ա/Ձ-ն ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրում հաշվառելը և այն առաջացել է ՀՀ քաղաքացի Արթուր Օհանյանի մոտ դեռևս 2015թ. և անհասկանալի պատճառներով արտացոլվել է որպես Արթուր Օհանյան Ա/Ձ-ի մոտ առկա ժամկետանց հարկային պարտավորություն: Ա/Ձ-ի ներկայացուցիչը հայտնեց նաև, որ համապատասխան ապացույցներ ձեռք բերելու նպատակով 16.10.2017թ. գրությամբ դիմել են ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե:

Ի պատասխան Արթուր Օհանյան Ա/Ձ-ի 16.10.2017թ. հարցմանը՝ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն 04.11.2017թ. թիվ 70-4/45646-17 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Արթուր Օհանյան Ա/Ձ-ի կողմից 2017թ. տարեկան եկամուտների մասին պարզեցված հաշվարկը ներկայացվել է 09.03.2017թ. «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի համաձայն հարկ վճարողների կողմից հարկային մարմին ներկայացվող հաշվարկը հարկային օրենսդրությամբ սահմանված ժամկետից ուշ ներկայացնելու կամ

չներկայացնելու դեպքում ժամկետին հաջորդող յուրաքանչյուր 15 լրացած օրվա համար հարկ վճարողից գանձվում է տուգանք հաշվարկված հարկի ընդհանուր գումարի 5 տոկոսի չափով: Նշված տուգանքի հանրագումարը չպետք է գերազանցի այդ հարկի հաշվարկված ընդհանուր գումարը: Հաշվարկը ուշ ներկայացնելու համար հաշվարկվել է տուգանք 32.000 ՀՀ դրամ գումարի չափով:

Վերոգրյալից ելնելով՝ 01.12.2016թ. կատարված 4800 ՀՀ դրամ եկամտային հարկի վճարումից 32.000 ՀՀ դրամը ուղղվել է հաշվարկված տուգանքին: Հետևաբար, տնդետեկանքում նշված պարտավորությունը առաջացել է 2016թ. տարեկան եկամուտների պարզեցված հաշվարկով հայտարարագրված հարկի չվճարված մասի և «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածով հաշվարկված տույժի արդյունքում:»:

Արթուր Օհանյան Ա/Ձ-ի փաստաթանը 27.11.2017թ. կրկին հարցում է ներկայացրել ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե, խնդրելով հայտնել արդյո՞ք քաղաքացի Արթուր Օհանյանի մոտ 2016թ. առաջացած հարկային պարտավորությունը վերաբերում է նաև 2017թ. ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրում հաշվառված Արթուր Օհանյան ԱՁ-ին և արդյո՞ք Արթուր Օհանյան ԱՁ-ն նման փաստական հանգամանքներում 19.09.2017թ. ունեցել է 38.720 ՀՀ դրամ ժամկետանց հարկային պարտավորություն:

Ի պատասխան նշված հարցմանը, ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն 08.01.2018թ. թիվ 70-4/292-18 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի՝

1. 26-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ քաղաքացին, որպես անհատ ձեռնարկատեր հաշվառելու պահից, իրավունք ունի, առանց իրավաբանական անձ կազմավորելու, զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ:

2. 27-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքացին իր պարտավորությունների համար պատասխանատու է իրեն պատկանող ամբողջ գույքով, բացառությամբ այն գույքի, որի վրա, օրենքին համապատասխան, բռնագանձում չի տարածվում:

«Անհատ ձեռնարկատիրոջ մասին» ՀՀ օրենքի՝

1. 1-ին հոդվածի համաձայն՝ անհատ ձեռնարկատիրական այն ֆիզիկական անձն է, որն իրավունք ունի, առանց իրավաբանական անձ կազմավորելու, ինքնուրույն, իր անունից և իր ռիսկով իրականացնել գործունեություն, որի հիմնական նպատակը գույք

օգտագործելուց, ապրանքներ վաճառելուց, աշխատանքներ կատարելուց կամ ծառայություններ մատուցելուց շահույթ (եկամուտ) ստանալն է:

Ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելիս անհատ ձեռնարկատեր ֆիզիկական անձը պարտավոր է հանդես գալ, որպես անհատ ձեռնարկատեր.

2. 9-րդ հոդվածի համաձայն՝ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձը կրում է պատասխանատվություն իր՝ որպես անհատ ձեռնարկատեր ստանձնած պարտավորությունների կատարման համար:

«Կազմակերպություններին և ֆիզիկական անձանց հարկային հաշվառման վերցնելու և հարկային հաշվառումից հանելու մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ ֆիզիկական անձին տրամադրվող հարկ վճարողի հաշվառման համարը մնում է անփոփոխ վերջինիս տարբեր կարգավիճակներում, և՛ որպես անհատ ձեռնարկատեր հանդիսացող, և՛ որպես անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձ համարվելու ժամանակ:

«Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտներ են համարվում ՀՀ պետական և համայնքների բյուջեներ վճարվող հարկերի, տուրքերի և օրենքով սահմանված կարգով հաշվարկվող տույժերի և տուգանքների ամբողջությունը, որոնց հաշվառումը, հաշվառման և (կամ) վճարման նկատմամբ հսկողությունը, մուտքերի ապահովման վերահսկողությունն օրենսդրությամբ վերապահված է հարկային մարմնին:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. 526-Ն որոշման թիվ 1 հավելվածով հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 44-րդ կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովի էլեկտրոնային հարցումն ստանալու օրվանից 3 աշխատանքային օրվա ընթացքում ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրում է տեղեկատվություն գնման գործընթացում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ:

Հաշվի առնելով վերը նշված իրավական կարգավորումները, հայտնում ենք, որ անհատ ձեռնարկատերն, ըստ էության, նույն ֆիզիկական անձն է, որը պետական հաշվառման պահից ձեռք է բերում ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու

իրավունք: Հետևաբար, անհատ ձեռնարկատիրոջ պարտավորությունների մեջ ներառվում է նաև ֆիզիկական անձի տարեկան եկամուտների մասին պարզեցված հաշվարկով ներկայացված պարտավորությունը:

Միաժամանակ, հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ վերը նշված կարգով գնման գործընթացին կարող են մասնակցել ինչպես անհատ ձեռնարկատերերը, այնպես էլ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձինք, ապա տվյալ դեպքում, հաշվի է առնվում անհատ ձեռնարկատեր հանդիսացող ֆիզիկական անձի՝ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցած ժամկետանց պարտավորությունների (այդ թվում՝ անհատ ձեռնարկատեր չհանդիսանալու ժամանակահատվածում առաջացած) ընդհանուր գումարը:»:

Խորհուրդը 29.03.2018թ. հարցում է ներկայացրել ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե՝ խնդրելով տալ եզրակացություն այն մասին, արդյո՞ք նշված՝ 38.720 ՀՀ դրամը հանդիսանում է հայտը ներկայացնելու օրվա (19.09.2017թ.) դրությամբ Արթուր Օհանյան Ա/Ձ-ի կողմից ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունեցած հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետանց հարկային պարտավորություն, թե՛ ոչ:

Խորհրդի հարցմանն ի պատասխան ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 04.04.2018թ. տրամադրվել է հետևյալ եզրակացությունը.

«Արթուր Օհանյան ԱՁ-ի ժամկետանց հարկային պարտավորությունը 19.09.2017թ. դրությամբ կազմում է 38.720 ՀՀ դրամ, որն առաջացել է 2016թ. տարեկան եկամուտների մասին պարզեցված հաշվարկով հայտարարագրված, որպես ֆիզիկական անձ, վարձակալական վճարներից ստացված եկամտից: Արթուր Օհանյանը որպես անհատ ձեռնարկատեր ՀՀ ԱՆ պետական ռեգիստրում հաշվառվել է 02.03.2017թ.: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ անհատ ձեռնարկատերն ըստ էության նույն ֆիզիկական անձն է, որը պետական հաշվառման պահից ձեռք է բերում ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու իրավունք, հետևաբար անհատ ձեռնարկատիրոջ պարտավորությունների մեջ ներառվում է նաև ֆիզիկական անձի տարեկան եկամուտների մասին պարզեցված հաշվարկով ներկայացված պարտավորությունը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի՝

- 32-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին,

- 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը.

- 44-րդ կետի համաձայն՝ կոմիտեն նույն կարգի 43-րդ կետի 3-ին ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի

կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:

- 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է գնումների բողոքարկման խրոհողին: Նույն կարգի 44-րդ կետով սահմանված՝ մասնակցության իրավունք չունենալու հիմքերի առկայության դեպքում նույն կետով նախատեսված տվյալները չեն ներկայացվում լիազորված մարմին, եթե մասնակիցը կամ կոմիտեն լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացրել է մինչև հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստին հաջորդող երրորդ աշխատանքային օրը:

«Ոստիկանության կողմից հայտարարված «ՀՀ ԿԱ ՈՁ ԳՀԱՊՁԲ-17/12/ԱԲ/3/ՊԾ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի 1-ին մասի՝

- 8.13 կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ Հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը՝ էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղ զբաղեցրած՝ մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը: Ընդ որում նույն ենթակետում հարցումն ուղարկվում է Ashkhen.Papoyan@taxservice.am էլեկտրոնային փոստի հասցեին սույն հրավերի 8-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան՝ էլեկտրոնային նամակի պատճենները միաժամանակ ուղարկելով Lusine.Ghahramanyan@taxservice.am և procurement@minfin.am էլեկտրոնային փոստի հասցեներին

- 8.15 կետի համաձայն՝ կոմիտեն նույն հրավերի 1-ին մասի 8.13 կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով պատվիրատուին տրամադրում է հարցման

մասին սույն հրավերի 9-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան տեղեկատվություն: Նույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մեժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրված տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:

Այսպիսով, Խորհուրդն արձանագրում է, որ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից 29.09.2018թ. տրված եզրակացության համաձայն՝ Արթուր Օհանյան Ա/2-ի ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորությունների գումարը կազմել է 38.720 ՀՀ դրամ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 2-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացը գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջությունն է, ներառյալ գնումների պլանավորումը, գնման առարկայի բնութագրերի հաստատումը, պայմանագրի կատարումը և կառավարումը:

Օրենքի 6-րդ հոդվածի՝

- 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային

առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ.

- 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

- 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը պաշտոնական ընթացակարգ է նախաձեռնում պգնումների բողոքարկման խորհրդում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների բողոքարկման խորհուրդը որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Նկատի ունենալով, որ Արթուր Օհանյան Ա/Ձ-ն ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացրած հայտի N 2 հավելվածով՝ հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՀ ԿԱ ՈՂ ԳՀԱՊՁԲ-17/12/ԱԲ/3/ՊԾ» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին, Խորհուրդը գտնում է, որ Ա/Ձ-ն նեկայացրել է իրականությանը չհամապատասխանող տեղեկատվություն, որի արդյունքում խախտել է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ նախատեսված իր իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողություններն, ինչը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Այսպիսով, Խորհուրդը գտնում է, որ Արթուր Օհանյան Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար առկա են Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով, 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 04.10.2017թ. Արթուր Օհանյան Ա/Ձ-ին (ՀՎՀՀ 27928323) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով խորհրդում նախաձեռնված պաշտոնական ընթացակարգը բավարարել:

2. Արթուր Օհանյան Ա/Ձ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման

խորհրդի անդամ՝



ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ